

5.3. 2005թ. նոյեմբեր ամսվա հիդրոտեղըրևութարանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, նոյեմբեր ամսին հանրապետությունում օդի ամսական միջին ջերմաստիճանը հանրապետության տարածքի մեծ մասում բարձր է եղել նորմայից 0.5-1.0 աստիճանով:

Նոյեմբերի առաջին տասնօրյակում օդի տասնօրյակային միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 0.5-2.0 աստիճանով: Երկրորդ տասնօրյակում օդի տասնօրյակային միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 1-3 աստիճանով: Երրորդ տասնօրյակում այն բարձր է եղել նորմայից 1.5-4.0 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանն Արարատյան դաշտում, Տավուշում, Սյունիքի հովիտներում կազմել է +12 +16°C, Լոռիում, Սյունիքի նախալեռներում և լեռնային շրջաններում՝ +6 +12°C:

Ամենաբարձր ջերմաստիճան գրանցվել է նոյեմբերի 1-ին, երբ օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 5-7, առանձին վայրերում՝ 8-9 աստիճանով: Առավելագույն ջերմաստիճան գրանցվել է Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ +20 +24°C, լեռնային շրջաններում, Լոռիում, Տավուշում, Սյունիքի նախալեռներում՝ +14 +19°C: Նոյեմբերի 1-ին ք.Երևանում, ք.Արտաշատում (Արարատի մարզ), ք.Արմավիրում (Արմավիրի մարզ) առավելագույն ջերմաստիճանը գերազանցել է այդ վայրերում երբևէ գրանցված տվյալ օրվա բացարձակ առավելագույն ջերմաստիճանին:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է 0 -4°C, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ -2 +3°C, Արարատյան դաշտում, Տավուշում՝ 0 +4°C, Սյունիքի հովիտներում՝ +2 +7°C:

Ամենացածր ջերմաստիճան գրանցվել է նոյեմբերի 25-ին, երբ օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 3-5 աստիճանով: Նվազագույն ջերմաստիճան գրանցվել է լեռնային շրջաններում, Լոռիում՝ -6 -10°C, Աշոցք գյուղում (Շիրակի մարզ)՝ -11°C, Տավուշում, Արարատյան դաշտում (բացառությամբ ք. Երևանի՝ -1°C և ք.Արարատի /Արարատի մարզ/՝ -7°C) և Սյունիքի նախալեռներում՝ -3 -5°C, Սյունիքի հովիտներում՝ 0 -3°C:

Ամսական տեղումների քանակը Տավուշում, Լոռիում (բացառությամբ ք.Տաշիրի՝ 120%), Շիրակում, Կոտայքում, Արարատյան դաշտում (բացառությամբ ք.Աշտարակի /Արագածոտնի մարզ/՝ 133%) կազմել է նորմայի 50-81%-ը, Գեղարքունիքի առանձին վայրերում և Սյունիքի նախալեռներում՝ 102-131%-ը:

Առանց տեղումների եղանակ է դիտվել ամսի 3-5-ին, 14-21-ին, 24-29-ին, իսկ մնացած օրերին առանձին վայրերում դիտվել են տեղումներ և ամպրոպ, լեռնային առանձին շրջաններում՝ ձյան տեսքով:

Նոյեմբերի 6-ին լեռնային առանձին շրջաններում տեղումները դիտվել են ձյան տեսքով, առաջացել է ժամանակավոր ձյան ծածկ: Նոյեմբերի 30-ի դրությամբ ողջ հանրապետությունում ձյան ծածկը բացակայել է: Այն պահպանվել է 2000 մ-ից բարձր բարձրությունների վրա:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 110-140%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում իջել է 4 սմ-ով և 2005թ. նոյեմբերի 30-ի դրությամբ կազմել 1898.08 մ, որը 2004թ. նույն օրվա համեմատ բարձր է եղել 37 սմ-ով: